

Յիսուսն աւելի միջատակարմիրներ կան, որոնցմէ մին է Հայկական Որդանը, հայկական գոյներուն ամէնէն աշխարհաճաշակը եւ ամէնէն կարեւորը:

Որքան որ տարիներ առաջ հատորիկ մը հրատարակեցի (արտատպեալ «Բազմավէպ»ի մէջ իմ հրատարակած յօդուածաշարքէն), դարձեալ կարեւոր կը նկատեմ հոս ծանրանալ եւ կարգ մը նոր նիւթեր հրատարակել:

Մեր մատենագրութեան մէջ գուցէ հնագոյն վկայութիւնը Որդանի մասին՝ Ղազար Փարպեցիի կը պարտինք, որ սա մանրամասնութիւնը կու տայ Արարատեան դաշտին մասնաւոր այդ Որդանի միջատին մասին. «Նաեւ դարձաւ եղէգնաւոր բուսոցն՝ ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Արարատոյ, այլ եւ ի նմանէ ծնեալ որդունս ի զարդ կարմրատեսիլ գունոց ընծայէ օգտասիրացն շահս եւ չքեղութիւնս»⁽⁵¹⁾: Գրեթէ նման է Մովսէս Խորենացւոյ հետեւեալ վկայութիւնը. «Եւ որդն յարմատոյ սիզոյ ի զարդ կարմրութեան գունոյ»⁽⁵²⁾: Գուցէ հոս հարկ ըլլայ ճշդել որ Հայկական այս կարմիրին որդը գետնատարած խոտին (Արարատեան դաշտին մինչեւ Արաքս յատուկ) արմատին վրայ չէր որ կ'աճէր, այլ ցօղունին եւ տերեւներուն վրայ:

Բազմաթիւ են մեր մատենագրութեան մէջ վկայութիւններ Որդանի մասին, ինչպէս օրինակ՝ Յովհաննէս Կաթողիկոսի «Կարմրութեամբ Որդանայ»⁽⁵³⁾ եւն., որոնք հարկ չկայ մի առ մի հոս կրկնել:

Օտարները գրեթէ միաբերան կը գովեն հայկական այս ներկը: Բելալորի արարը Ը դարուն կը վկայէ որ «Արտաշատ, է Ալ-Քիր-միլ»⁽⁵⁴⁾, այսինքն թէ Արտաշատ (Դուին) քաղաքը այնքան նշանաւոր էր իր մանարաններուն Որդանով (Քիրմիլ) որ կը կոչուէր Ալ-Քիրմիլ (Որդան): Նոյնը կը կրկնէ Ալ-Պալտհորի. իսկ Իսկն Հաուզալ կ'ըսէ. «Տէնիլ (Դուին) Արտալիլէն աւելի մեծ քաղաք մըն է... կը պատրաստեն ներկ մը քիրմիլ կոչուած: Ես իմացած եմ որ այս քիրմիլը տեսակ մը որդ է»⁽⁵⁵⁾: Ասիկա կը հաստատէ 982էն պարսիկ անանուն աշխարհագիր մը, ըսելով. «Դուին... կ'արտադրէ որդեր, որոնցմէ քիրմիլի գոյնը կը պատրաստեն»⁽⁵⁶⁾: Համո-Ալլահ Մուսթաֆի 1340ին կը վկայէ. «Մարանդի հարաւային դաշտերուն մէջ քիրմիլ միջատը կը գտնուի, ասիկա կարելի է գտնել միայն մէկ շաբթու մը ընթացքին, ամառուան եղանակին, եւ եթէ միջատը այդ տունն չհաւաքուի, կը ծակէ իր խոզակը ու կը թռչի»⁽⁵⁷⁾:

(51) Պատ. Հայոց, Վենետիկ, 1891, էջ 28:

(52) Պատ. Հայոց, Վենետիկ, 1881:

(53) Պատ. Երուսաղէմ, 1867, էջ 250:

(54) Արար. մատ. Հայաստանի մասին: Թրգմ. Բաղրատ Խալաթեանց, Վիեննա, Միսիթ. տպ. էջ 26:

(55) The Oriental Geography, London, 1800, p. 161.

(56) Hududs al-Alam, London, 1937, p. 143.

(57) London, 1919, p. 89.